

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՐՇԱԼ, ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐ ԴՄԻՏՐԻ ՏԻՄՈՖԵԻ ՅԱԶՈՎԻՆ

Մոսկվա, ԽՍՀՄ պաշտպանության մինիստրություն

Մեծարգո Դմիտրի Տիմոֆեի, ուզում ենք Ձեզ տեղյակ պահել, որ սեպտեմբերի 13-ին Մեր կողմից հեռագիր է ուղարկվել ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Սերգեյի Գորբաչովին հետևյալ բովանդակությամբ.

«Այսօր ստիպված ենք կրկին դիմել Ձեզ, այս անգամ խոր վշտով ու վրդովումով՝ տեղեկացնելու համար, որ Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության վիճակը դարձած է ողբերգական նաև եկեղեցական կյանքում:

Լեռնային Ղարաբաղի հոգևոր առաջնորդը՝ Պարգև եպիսկոպոս, հաղորդեց Մեզ, թե կիրակի օր, 9 սեպտեմբերին, Ամարասի հայկական վանքում (հիմնված 4-րդ դարում), հանդիսավոր պատարագից հետո, գիշերը երկու անգամ ենթարկված է հարձակումների բանակային համազգեստով անձանց կողմից, որոնք կրակ են բացած վանքի պատերին, սարսափի մատնելով հոգևոր ծառայողներին և անզեն պահակներին: Վտանգի տակ են նոր վերաբացված մեր հինգ վանքերն ու եկեղեցիները և մեր հոգևորականների կյանքը:

Դիմում ենք Ձեզ ծանր ապրումներով, սակայն տակավին հույսով, որ Ձեր բարձր հեղինակությամբ և օրենքի ուժով և ազգությունների ինքնորոշման իրավունքով վերջ կգտնի Լեռնային Ղարաբաղում հայերի ողբերգությունը, ինքնավար այդ մարզը դնելով Ձեր պրեզիդենտական իշխանության ներքև: Անիրավված հայերի համբերության բաժակը վաղուց լցված է, և նրանք պատրաստ են ազատ մեռնելու, քան ստրուկ ապրելու, ինչպես հերոսները Տերմոպիլեի, Վալմիի և Կուլիկովի:

Ձեր չափազանց բազմազբաղ և տագնապալի այս օրերին, խնդրում ենք մի պահ գոնե Ձեր ուշադրությունը ուղղեիք դեպի Լեռնային Ղարաբաղում տառապող մեր ժողովուրդը և Ձեր խաղաղարար արդար մի վճիռով փրկեիք նրանց, հանուն Ձեր հռչակած հումանիստական մեծ գաղա-

փարների, հօգուտ նաև ադրբէյջանցի մեր հարևան ժողովուրդի կյանքի խաղաղության:

Թույլ տվեք վերջացնել Մեր խոսքը Լամարտինի տողերով. «Ուժեղների փառքը տկարների ազատությունն է»:

Խորին հարգանքով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
14 սեպտեմբեր 1990 թ.